1591–2. Թվ. ՌԽ. Օլախի պարոն Բեդրան իւր կամաւ եթող զպարոնութիւն, և ելաւ յերկրէն և գնաց. յայտնի ունելով ընդ իւր զկին և զորդիքն և զբոլորի մարդիքն որչափ ունէր, զօրականն՝ զՄահարք և զՕլախք, իբրեւ 3000. նա և ստացուածս իւր, զոսկին, զարծաթ, զհանդերձն, զչորքոտանիք, զամէնն ընդ իւր հանելով. և էանց այս թագաւորիս երկրաւ և գնաց Ալամանաց յերկիր, առ կայսրն քրիստոնէից. և անդ եկաց։ Զոր ոմանք ասեն, թէ երկու քաղաք գնեալ էր վասն իւր, զի բնակեսցէ անդ. բայց մեր իշխանքն բազում նեղութիւնք յարուցին ի վերայ Նորա, ուժգին առնելով և յափշտակելով ի ձեռաց Նորա զբարիքն իւր. և նա անմռունչ հեծութեամբ տալով Նոցա, և ազատեցաւ ի ձեռաց Նոցա. և ելաւ գնաց։

1591–2. Թվ. ՌԽ. Դաթարի խանն ինքն և եղբայրքն իւր բազում զօրաք գնաց ի վերայ Մոսկովի երկրին. և Մոսքովի գնեազն իւր հեծելով պատերազմեցաւ ընդ անօրէնսն և կոտորեաց զնոսա մինչեւ ի սպառ. և էին թուով իբրեւ 100,000. եւս բազումն կենդանի կալաւ զմրզաներ, զսուլթաններ և այլ բազում ռամիկ մարդիկ, որչափ էին՝ զամենեսեան ի ջուր ընկղմեց, և ոչ եթող կենդանի և ոչ զոք։ Որպէս այս երկրիս իշխանքն՝ զոր ոչ ունին հնարք կամ քաջութիւն կոտորել զնոսա կամ ըմբռնել կենդանի. և թէպէտ զոք ըմբռնեն ի յանօրինաց, դարձեալ առ նոսա ընդդէմ սպիտակի (դրամ) փոխելով դարձուցանեն. իսկ նոքա կրկին անգամ գալով՝ զերկիր նոցա հրձիգ առնելով և զինքեանս գերելով, զիշխանսն և զկանայս և զորդիս և զամենայն բարութիւն նոցա հանելով յերկրէն, ընդ միոյն հազարապատիկ չահելով, և զնոսա ծաղր առնելով։

1592–3. Հայոց Թվ. ՌԽԱ. Բարեպաշտ թագաւորն մեր Զիկմունդ ողորմութեամբն Աստուծոյ կարգուեցաւ, և երեր իւր թագուհի ի տանէ կայսերաց, որ կոչի Մաքսիմիլիանոս կայսր. զոր գնացեալ մեծամեծ իշխանք և եպիսկոպոսունք, փառաք և պատուով և մեծաւ փարթամութեամբ բերեալ պսակեցին թագուհի, և ի միում հետէ զհարսանիքն, արարին ըստ օրինի թագաւորաց։ Բայց ոմանք իշխանացն և մեծամեծաց հակառակ կացին, և ոչ կամէին ընդունել զայս, ասելով, եթէ ուխտ և դաշինս կայր ի միջի մերում, որ այդ տանէն այս աշխարհս թագուհի չի ածէաք, և դու, թագաւոր, զմեզ զամենեսեան արհամարհեցեր և անփոյթ արարեր, և զքո կամսդ կատարեցեր. այս բանս մեզ ոչ է հաճոյ։ Եւ այլ բազում ինչ խօսեցան անկարգ և անօգուտ յերեսս թագաւորին։

1592. Թվ. ՌԽԱ. Սդարոսդան Պրիսքիյ առ Աստուած փոխեցաւ. Աստուած ողորմի իւր հոգուն։

1592. Թվ. ՌԽԱ. ՈՄ Բեթրա անուն Օլախի պարոն անուանեցաւ. և էր որդի Օլէքսանար պարոնին. և բազում ժամանակ յերկրէ յերկիր շրջեցաւ առ թագաւորաք. զոր յետոյ եկեալ ի Կամենից, և նստաւ փոքր մի